

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ  
ՔՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ  
ԲԵՐՔԵՐԻ  
ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ՀԵՌԱԿԱ  
ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ


КРЕСТЬЯНСКАЯ  
*Газета*  
ԽՈՐՀՈՒՅԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱՅՈՑ ՀԵԶՈՒ

ՈՒԱՆԴԱԿ ԶԵՌՆԱՐԿ ՀԱՅՈՑ ԼԵԶԳԻ  
ԿՈՆՍՈՒԼՏԱՆՏԻ ՅԵՎ ԶԵՌԱԿԱՅՈՂՆԵՐԻ ՀՈՄԱՐ

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 5-ՐԴ

Կազմեց Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Խմբագրեց պրոֆ. Մ. ԱԲԵՂՅԱՆ



ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺԿԻ-Ի  
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
«ԽՈՐՀՈՒՅԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆ  
ՑԵՐԵՎԱՆ 1938 թ.

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայոց լեզվի դասընթացի նպատակն է կոլտնտեսային և բրիգադային պատի թերթերի խմբագիրներին ու թղթակիցներին սովորեցնել՝ իրենց մտքերն արտահայտել պարզ ու ճշգոռ:

Այդ ունակությունը ձեռք բեռնելու համար հեռակայողը նախ պետք է կարողանա ազատ կարգավ, առանց տառասխաների ու կետադրական սխաների գրել և նյութը դասավորել վարոշ ծրագրով։ Նա պետք է կարողանա նաև յերգիծանք մացընել իր վորոշ նյութերի մեջ, վարպեսպի ավելի հետաքրքիր ու գրավիչ դարձնի թերթը, պահպի շատ ընթերցող ներգրավի, վորով և ավելի լավ հճանի իր նպատակին։

Հայոց լեզվի կոնսուլտանտը հենց այս նպատակներն ել պետք են հետապնդի։

Հեռակայողներին լեզվի հատուկ գասագիրք չի ուղարկվում, լեզվի կոնսուլտանտն ինքը, նկատի ունենալով հեռակայողների պատրաստության, մակարդակը, յուրաքանչյուր խմբի հետ պարագելիս առանձին դաս կարող է ընտրել մասսայական գալրոցների համար հրատարակված դասագրքերից։ Կարելի յե նաև դասագրքի փոխարեն սովորացնել վորոշ տպագիր թերթ (շրջանային, կենտրոնական), հենց հեռակայողների լույս ընծայած պատի թերթերը և այլն։

Կարելի յե հեռակայողներին խմբերի բաժանել՝ ըստ նրանց պատրաստության, և յուրաքանչյուր խմբի հետ պարագել առանձին դասագրքով։

Սույն «Ուժանդակ ձեռնարկ»-ը, վոր կազմված է գոյություն ունեցող քերականության դասագրքերի ողափորձումով, նպատակ ունի վարոշ չափով նպաստել լեզվի կոնսուլտանտի աշխատանքին։ Մըա մեջ զրված է հայոց լեզվի քերականության համառոտառությունը, վորը կոնսուլտանտի համար՝ ոժանզակ նյութ՝ կոնսուլտանտի անցածն ավելի լավ յուրացնելու համար։

Հասկանալի յե, վոր այսքան փոքրածավալ զրքույկում հնարավոր չեր քերականության բոլոր կանոններն իրենց բոլոր

մանըամասնություններով զետեղել: Դիբքը կազմելիս հաշվի յենք առել, վոր պակասը կլրացնեն լեզվի կոնսուլտանտները, վորոնք շրջանային կենտրոնի դպրոցի լավագույն դաստիաներից ևն լինելու:

Պարապմունքի ընթացքում զլխավոր շեշտը պիտի զնի գործնական աշխատանքի վրա: Դասախոսության սփոտեմով լեզվու սովորեցնել հնարավոր չե: Հետակայողներին շարունակ գործնական աշխատանքներ պիտի տալ և հենց այդ աշխատանքներն ուղղելու ընթացքում սովորեցնել քերականության հիմունքները, ընդունված կանոններն ու որենքները:

Ամբողջ ձեռնարկը բաժանված եւ 8 դասի (յուրաքանչյուր դասը յերկու ակադեմիական ժամ), վորի հետևանքով նյութը ձայրահեղորեն խառացված ե: Սակայն այդ արված ե նկատի տունելով այն հանգամանքը, վոր պարապմունքները վերջանալուն յերկար ժամանակ չի մնացել: Տեղական պայմաններից յելնելով, յեթե ժամանակը ներում ե, կոնսուլտանտը կարող ե դասերի թիվն ավելացնել, վորով ավելի շատ ժամանակ կունենա նյութը մանրամասնորեն անցնելու համար:

## ԿԱԶՄՈՂ

### I ԴԱՅ

#### ՀԱՅՅՈՒՆ, ՏԱՐ, ՎԱՆԿ

Հնյուն և տար.—Հնյունի գրավոր արտահայտությունը կոչվում է դիլ կամ տար: Հայոց լեզվի այրուբենն ունի հետեւալ տառերը, ա, բ, գ, հ, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, ճ, ձ, զ; ճ, մ, յ, ն, շ, ռ, չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ը, ց, ւ, փ, ք, օ, ֆ:

Բացի սրանից կա նաև «և» նշանագիրը, վոր յ+հ+ւ տառերի միացությունն եւ արտահայտում ելով հնչյունները:

«Ու» հնչյունի համար առանձին տառ չկա մեր այրուբենում, այլ գրվում ե ռուււ յերկտառով: Է, Ի, Օ տառերը պործածվում են հին գրքերում: «Է» տառի հնչյունն ե «Ե», «Ո» տառինը՝ «Վ», կամ «Ու», իսկ «Օ» տառինը՝ «Ո»:

Հնչյուններից կազմվում են բառեր, բառերից՝ նախադասություններ կամ խոսքեր, վորոնցով արտահայտում ենք մեր մըտքերը:

Մեր հնչյուններից վեցը ձայնավոր են (ա, ե, ը, ի, ո, ու), մնացածը՝ բազաձայն:

Վանկը կազմվում է մեկ կամ մի քանի հնչյունից: Մեկ հնչյունն առանձին կարող է վանկ կազմել միայն այն գեալում, յեր ձայնավոր ե: Յեթե վանկը կազմված է մի քանի հնչյունից, դրանից ձայնավոր է միայն մեկը:

Միավանկ է բազմավանկ բառեր.—Յեթե բառի մեջ միայն մեկ ձայնավոր կա, բառը միավանկ ե: Յեթե մեկից ավելի ձայնավոր կա, բառը բազմավանկ ե:

Միավանկ բառեր,—Հավ, ոճ, ձի, գետ, ջուր:

Բազմավանկ բառեր.—աթոռ, ապակի, մթնել=մըթնել, վարելանող, առագաստակավ, կոլտնտեսական, դասախոսությունները:

Տողադրած.—Մի բան գրելիս, յեր ամբողջ բառը մի առղի վերջում չի աեզագործվում, առզադարձ ենք անում, ալսինքն՝ բառի մի մասը տանում ենք հաջորդ տողը: Այդ դեպքում տողի վերջում գրվում է յենթամնա (-) նշանը:

Տողադրածի ժամանակ բառը բաժանում ենք վանկերի և ամբողջ վանկը կամ վերի տողումն ենք գրում, կամ տակի տողն ենք անց կացնում: Վանկը կիսել չի կարելի: Դրա համար պիտի է լավ իմանալ բառերը վանկերի բառանելու կանոնը:

11-226849P

Բառերը վաճկերի բաժանելիս՝

ա) Յեթե յերկու ձայնավորների միջև կա մեկ բաղաձայն, այդ բաղաձայնը տրվում է հաջորդ վանկին (առաջ, առաջ, Ա-վո, կատու, փողոց, ապահով, ամենազորեղ):

բ) Յեթե յերկու ձայնափորների միջն կա յերկու բաղաձայն, մեկ բաղաձայնը տրվում է նախորդ վանկին, մյուսը՝ հաջորդին (կարմիր, պատկեր, Վարդան, արտակարգ):

գ) Յերկու ձայնավորների միջև յերկուսից ավելի բաղաձայն լինելու դեպքում վերջին բաղաձայնը պիտի տալ հաջորդ վահկին, մյուսները թողնել նախորդին (յերկրագունդ, արթնաշնորհ):

Զայնափոխություն. — Յերբ բառերից հետո նոր վանկ և ավելանում և շեշտն անցնում և դրա վրա, բառի վերջին վանկի ձայնավորը, շեշտը կորցնելով, մի շարք դեսպերում փոխվում և մի ուրիշ ձայնավորի կամ բաղաձայնի, կամ թե զուրու և ընկնում. որինակը յերկիր—յերկրային, սիրա—սըրտակից—սրտակից, այգի—այգեգործ, բարի—բարություն, ձու—ձվաճի, զարթուն—զարթեւ, ջուր—ջըրաման—ջրաման, կես—կիսեւ, մատյան—մատենամար, լույս—լուսափոր, պաշտօնյա—պաշտօնեյություն:

*U. S. S. U. S. U. S.*

1. Անգիր իմաստը և գրել հայելունի այրութենն ընդունված հաջորդականությամբ։ Գրել ձայնավոր տառերն առանձին։

2. Գրել 10 միավանկ բառ, 20 բազմավանկ բառ:

3. Աւանկերի բաժանել հետեւյալ բառերը՝ մատիտ, աետրակ, առաստաղ, յերկրագործ, պատրվակ, կրունկ, բերքահավաք, զարդարութաց, հրատարակչություն, անտնտեսավարություն, հարվածային, գրպավել, խալշտել:

*U S O h q h 2 z U R 8 b f*

ա) Վերըն և վանկի հիմքը:

բ) Վանկերի բաժանման ոլենքը յթը և հարկավոր ինում  
մեզ:

II 74

ԲԱՐՎԱՀՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐԶ, ԲԱՐԴ, ՅԵՎ ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՌԵՐ. ԱՐՄԱՏ

Բարգ բառերը կազմվում են յերկու (սակավ անդամ) յերեք) բառի միացումից: Որինակ՝ կոչկակար բառը բաղկացած է կօժիկ և կօտք(ել) բառերից: Բարդ բառերի յերկու բաղադրիչ մասերի միջև սովորաբար դրվում է «» ձայնավորը (հոգակապ), որինակ՝ դասապիրք: Բայց կարող են լինել նաև առանց դրանք: Որինակ՝ հայթուխ:

Ածանցական բառերը կտղմված են մեկ բառից կամ արմատից և մեկ ածանցից (ընկեր+ական, մատ+նոց, ձի+ավոր, հիանալ):

Ածանցները կամ ածանցական մասնիկներն առանձին վերցրած՝ իմաստ չունեն, բայց յերբ սկզբից կամ վերջից միանում են բառին, նրան նոր իմաստ են տալիս. (Ճի՞ կենդանի յե, ապոր՝ առանձին վերցրած իմաստ չունի, Ճի՞ ապոր՝ Ճի նստած մարդ):

Բառի սկզբից միացող մասնիկները կոչվում են նախածանց (անտուն, գծբախտ, տղետ), իսկ բառի վերջից միացազները՝ վերջածանց (սդային, հարվածային, ստախանովական, փայտեղին, փողոցային, գետական):

Պարզ կամ արմատական բառ կոչվում են այն բառերը, վո-  
րոնք վոչ բարդ են և վոչ ել սկզբից կամ վերջից վրբեն մասնիկ  
ունեն. որինակ՝ հաց, հող, վոչխար, բաժակ:

Արևատը բառի այն պարզ մասն է, վոր մենակ չի գործած-  
վում իրրե առանձին բառ, այլ գործածվում է ածանցների հետ  
միացած, կամ ուրիշ բառերի հետ բարդված. որինակ՝ նի արմա-  
տից, վոր իրրե բառ չի գործածվում, կազմվում են՝ հիանալ,  
հիացում, հիառաթափեր:

Ծանոթ.—Ածանցական բառերը կազող են կազմվել նաև բարդ բառերից (գասակարգ-ային, մատենագրական, փա-րասիբ-ություն), ինչպես և ածանցական բառերից (ժողո-

վաւրդ, ժողովրդ—ական, ժողովրդական—ություն, համա—  
ժողովրդական և այլն):

Բարդ բառերը ևս կարող են կազմվել ածանցական բառերից. որինակ՝ ժողովուրդ, ժողովրդասեր:

ԿԲՀԱԾ ԲԱՌԵՐ.—Մեր լեզվում, ինչպես նաև խորհրդային  
մյուս ժողովուրդների լեզուների մեջ, գործածվում են մի քանի  
բառերի կրծատ միացման ձեփեր՝ դրա համար վերցնում են:

ա) Մի բառն ամբողջությամբ, մյուս բառի մի մասը (առ  
քամին—առողջապահության բաժին, պյուղխորհուրդ—պյուղական  
խորհուրդ և այլն):

բ) Յերկու կամ յերեք բառերի մասերը (խմբկոլ—խմբա-  
գրական կոլեգիու, շրջգործկոմ—շրջանային գործադիր կոմիտե,  
կենտրոն—կենտրոնական կոմիտե և այլն):

գ) Բառերի սկզբնատառերը (ԲՈՒՀ—բարձրագույն ուսում-  
նական հաստատություն, ՄՏԿ—մեքենայական և տրակտորային  
կայան և այլն):

Պատի թերթի խմբագիրներին խորհուրդ և արվում այս  
կարգի կրծատութիւններից խուսափել: Հաճախ այս կրծատութիւնն  
այնպիսի արտառող ձեեր են ստանում, վոր ընթերցողը վոչինչ  
չի հասկանում: Նման կրծատ միացություններով կարելի յե-  
տործածել միայն այն բառերը, վորոնք վաղուց արդեն գործա-  
ծության մեջ են մտել և ընթերցողներին լավ ծանոթ ու հաս-  
կանալի յեն:

ԲԱՌԵՐՆ ԻՐԱՐ ՆԿԱՏՄԱՄԲ և ըստ իրենց իմաստի լինում են:

ա) Նույնանիշ—(նույն նշանակությունն ունեցող) այտ-  
թուշ, մաղ—հեր, վախ—յերկուղ և այլն:

բ) Համանիշ—(նման նշանակություն ունցող) հիանալի—  
սքանչելի, ավարտել—վերջացնել, նուրբ—քնքուշ և այլն:

գ) Համանուն—գրությամբ իրար նման են, նշանակությամբ՝  
առըբեր, որինակ, նոտ (վոչխարի), նոտ (ծաղկի), սեր (կաթի),  
սեր (զգացմունք) և այլն:

դ) Հականիշ—իրար միանգամայն հակադիր իմաստ ունեն  
(սուր, բութ, կարճ, յերկար, մեծ, փոքր և այլն):

## Ա Շ Խ Ա Տ Ա Վ Բ

Գրեցեք 10 պարզ, 10 բարդ բառ, 5 նախածանցով և 5  
վերջածանցով բառ:

Սույն հատվածն արտադրեցեք, ածանցված բառերի տակ  
մեկ գիծ քաշելով, բարդ բառերի տակ՝ յերկու գիծ:

«Հողը, նրա ընդերքը, ջրերը, անտառները, գործարանները,  
Փարբիկները, հանքահորերը, հանքերը, յերկաթուղային, ջրային  
ու ողային տրանսուրսը, բանկերը, կապի միջոցները, պետու-  
թյան կազմակերպած խոշոր զյուղատական ձեռնարկու-  
թյունները (խորհրդային տնտեսությունները, մեքենատրակտո-  
րային կայանները և այլն), ինչպես նաև կոմունալ ձեռնարկու-  
թյունները և բնակարանային հիմնական ֆոնդը քաղաքներում  
ու արգյունաբերական վայրերում, պետական սեփականություն,  
այսինքն համաժողովրդական ունեցվածք են»:

(ԽՍՀՄ Ստալինյան Սահմանադրության 6-րդ հոդվածը)

III Գ Ա Ս  
ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Խասի մասեր — Խաքի մասերն են՝ գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակրայ, կապ, շաղկապ, ձայնարկություն:

Գոյական կոչվում են այն բառերը, վորոնք ցույց են տալիս մեզնից զուրս և մեզնից անկախ գոյություն ունեցող վորոն առարկա, կամ իրեն այդպիսին մտածված վերացական առարկա, հասկացողություն (դիբք, սեղան, նստարան, ջուր, սղ, հող, մարդ, թոշուն, զարմանք, փառք, քաջություն, տանջանք):

Գոյական անունները լինում են հատուկ և հասարակ:

Հատուկ անուն կոչվում են այն գոյական անունները, վոր արգում են ուսուն տեսակի առարկաներից միայն մեկին առանձին վերցրած, այսպիս են մարդկանց անունները (Տիգրան, Սուրեն և այլն), աշխարհագրական հատուկ անունները՝ քաղաքների, պյուղերի, գետերի, լճերի, ծովերի անունները (Յերեն, Հայաստան, Կազբեկ, Քուս, Կիլովաբադ և այլն):

Հասարակ կոչվում են այն անունները, վոր արգում են միևնույն տեսակի բոլոր առարկաներին, որինակ՝ բոլոր ծառերին առում ենք ծառ, բոլոր կովերին՝ կով, բոլոր գրերին՝ գիրք:

Գ Ո Յ Ա Կ Ա Ն Ի Թ Ի Վ Ը

Գոյականներն ունեն յերկու թիվ — յեզակի և հոգնակի:

Եերը գոյականը ցույց է տալիս մեկ առարկա, յեզակի յե (որինակ՝ գիրք, մատիտ, թերթ, գասաթոս, ուսանող), յերը ցույց է տալիս մի քանի առարկա՝ հոգնակի յե (որինակ՝ գրքեր, մատիտներ, թերթեր, գասաթոսներ, ուսանողներ):

ՀՐԳՆՑԿԻ ԴԱՐՉՆԵԼՈՒ ԿԱՆՈՆԸ

ա) Միավանեկ յեզակի բառերը հոգնակի գարձնելու համար վերջից ավելացնում ենք եր, որինակ՝ կով—կով+եր, հավ—հավ+եր, քար—քար+եր, սար—սար+եր:

բ) Բազմավանեկ յեզակի բառերը հոգնակի գարձնելիս վերջից

ավելացնում ենք ներ, որինակ՝ ուսանող—ուսանող+ներ, դասարան—դասարան+ներ, նախիլ—նախիլ+ներ, պահարան—պահարան+ներ:

Ուշագրություն դարձրեք, յերը բազմավանկ բառը յեզակի թվում վերջանում է և տառով, հոգնակի գառնալիս յերկու և յելինում իրար մատ: Դրանցից մեկը բառավերջի «ն» ե, մյուսը «ներ» մասնիկի սկզբնատառը, որինակ՝ գասարան—ներ, պատճեն—ներ: Դրաբարից մնացած հոգնակի ձեւեր են՝ վարդիք, տղայք և նմանները, փոխանակ՝ վորդիներ, տղաներ ձեւերի:

Մի շարք բառեր գրաբարում վերջանում են և տառով, աշխարհաբարում այդ և տառը գուրս և ընկել: Այժմ այդ բառերի հոգնակիում վերականգնվում է գուրս ընկած և տառը (որինակ՝ մատ—մատներ, գուր—գուներ, ձեռ—ձեռներ և այլն):

Բարդ բառերը հոգնակի կաղմելիս ա) յեթե յերկրորդ բառ դարդիչ մասը միավանկ է և այդ միավանկ բառը բարգության մեջ ել պահում է իր նշանակությունը, հոգնակիում ստանում է շեր» մասնիկը:

բ) Յեթե այդ միավանկ բառը բարգության մեջ իր նշանակությունը կորցնում է ու մի նոր իմաստ և ստանում, հոգնակիում ստանում է «ներ» մասնիկը (դասագիրք=զասի գիրք հոգնակի՝ դասազրքեր, սեահող=սև հող, զորագունդ=զորքի գունդ, հոգնակի՝ սեահողեր, զորագոնդեր: Բայց ձկնորս, մարդասեր նշանակում են վոչ թե ձկան վորս, մարդու սեր, այլ ձուկ՝ վորսացող, մարդ սիրող, հոգնակի՝ ձկնորսներ, մարդասերներ):

Հ Ո Լ Ո Վ Ո Ւ Մ

Գոյականները, նայած թե խօսքի մեջ ինչպիսի պաշտոնունեն, զանազան ձեվերով՝ փոփոխվում են: Գոյականի այդ փոփոխության ձեւերը կոչվում են՝ հոլով:

Առանձին հոլովները կոչվում են՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, (վերջավորությունը՝ ից, ուց), գործիական (վերջավորությունը՝ ով), ներգոյական վերջավորությունը՝ ուժի):

Հայցականը նման է ուղղականին, սեռականը՝ տրականին Հոլովները սենյակ կոյականը.

Յեզակի թիվ Ուղղական—հայցական—սեռական

Հոգնակի թիվ սեռյական

Սեռական-տրական — սենյակի  
 Բացառական — սենյակից  
 Դործիական → սենյակով  
 Ներգոյական — սենյակում  
 սենյակների  
 սենյակից  
 սենյակով  
 սենյակներում

Գոյականների մեծ մասն այսպես են հոլովում: Կան զոյականներ, վորոնց սեռական-տրականը վերջանում են վոչ թե ի-ով, այլ ու-ով, բացառականը՝ ուց (վորդի վորդու—վորդուց), ուրիշները՝ ան-ով, ոչ-ով և այլն): Բայտ այդ հատկանիշների ունենք հետեւյալ հոլովումները—ի, ու, ան, վա, ով, որ, ց:

Ուզգ՝ սեղան, վոսկի, դուս, որ, քույր, հայր, Տիգրանենք  
 Մեռ-ար.՝ սեղանի, վոսկու, դուսն, որվա, քրոջ, հոր, Տիգրանենց:

Մարդ, կին բառերը հոգնակի ունեն՝ մարդիկ, մարդկանց,  
 մարդկանցից և այլն, կանայք, կանանց, կանանցից և այլն:

### Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

1. Գրեցեք 7 հատ միավանկ և 5 հատ բազմավանկ զոյական անուններ, դարձրեք հոգնակի:

2. Գրեցեք 5 հատ հասարակ և 5 հատ հատուկ անուններ:

3. Հոլովեցեք հետեւյալ գոյականները՝ քաղաք, գինի, այգի, ձուկ, ուսում, կառավարություն, բորբոքում, տուն, գարուն, ամառ, ընկեր, մայր:

### Ս Տ Ա Ի Գ Ի Զ Ա Ր Ց Ե Ւ

ա) Վորմնք են գոյական անունը հոգնակի դարձնելու կանոնները:

բ) Ի՞նչ շեղումներ կան այդ կանոնից:

### IV Դ Ա Ս

#### Ա Մ Ա Կ Ա Ն

Ածական կոչվում են այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկայի հատկությունը, վորակը, որինակ՝ կարմիր, լայն, մեծ, խելոք, կլոր, թույլ:

Ածականները դրվելով գոյական անվան վրա՝ անփափախ են մնում. որինակ՝ մեծ գիրք, մեծ զրքեր և այլն, Բայց յերբ մենակ գործածվում են իրքեւ գոյական, հոլովովում են ինչպես գոյականներ. որինակ՝ մեծ, մեծից և այլն, բարի, բարու, բարուց և այլն:

#### Թ Վ Ա Կ Ա Ն

Թվական կոչվում են այն բառերը, վորոնք ցույց են տալիս առարկայի քանակը կամ կարգը. որինակ՝ յերեք, յոթը, ութը, ինը, տասը, տասնմեկ, հիսուն, վաթսունչորս և այլն: Առաջին, յերկրորդ, յերրորդ, չորրորդ, վեցերորդ, տասնհինգերորդ և այլն: Առաջինները կոչվում են բանական թվական, յերկրորդները՝ դասական թվական:

Դասական թվականներից «առաջին» բառն առանձին կադմություն ունի, հետեւյալ յերեքը կազմվում են քանակական թվականի արժամաթի վրա ավելացնելով լրող մասնիկը, իսկ մացածների վրա՝ երրորդ մասնիկը (յերկ+բորդ, յեր+բորդ, չեր+բորդ, հինգ+երրորդ, վեց+երրորդ, յոթն+երրորդ, ութն+երրորդ, ինն+երրորդ, տասն+երրորդ, տասնվեց+երրորդ և այլն: Դրա համար ել «յերրորդ», «չորրորդ» դասական թվականները գրվում են յերկու բառվ:

Ուշադրություն դարձրեք նաև, վոր յոթը, ինը, տասը բառների վերջին և տառը, վոր դուրս և ընկել, վերականգնվում և (յոթներորդ, իններորդ, տասներորդ, առաջիներորդ):

Դասական թվականները բառերով գրելու փոխարեն կարելի յերեկ:

1) Հոսմեական թվանշաններով (I, II, III, IV, V, VI, VII):

XIV... XIX... XXII... XXIX... XXX... XXXV... XL... XLI...

L, LI... LIX, LX, LXI. և այլն:

2) Հայերենի այբուբենից կազմված թվանշաններով, —ա) (, պ), զ), ե), ղ), է), ը), թ), ժ), ժա), ժթ), ժի), իա), իթ), իթ); իթ) և այլն:

Այս դեպքում ա—թ միավորներն են, ժ—ղ՝ տասնավորները—ժ=10, ի=20, լ=30, իւ=40, ծ=50 կ=60, հ=70, ձ=80, զ=90, ճ=ջ՝ հարյուրավորները, ո—ք՝ հազարավորները:

3) Արաբական թվանշաններով՝ 1-ին, 2-րդ 3-րդ... 9-րդ...

15-րդ, 176-րդ և այլն:

Թվականներն իրեն ածական դրվելով գոյականի հետ, անփոփոխ են մնում. որինակ՝ յերկու գիրք, յերկու գրքի և այլն: Բայց յերբ մենակ գործ են ածովում իրեն գոյական, հոլովում են ինչպես գոյականները. որինակ՝ վեց, վեցի, վեցից և այլն:

Յերբ գոյական անունը գործ ե ածովում թվականի հետ, սուվորաբար այդ գոյականը, յերբ անորոշ ե, զրվում ե յեզակի թվով, թեկուզ նշելիս լինի մեկից ավելի առարկա (որինակ՝ վեցմարդ, յոթ կով, հինգ որաթերթ):

Գոյական անունը թվականի հետ գործածելին հոգնակի թվով ե գրվում այն գեպքում, յերբ անհրաժեշտ ե հատկապես շեշտել գոյականի բազմաթիվ լինելը, առանձնապես, յերբ գոյականը վորոշ ե (Բազվի 26 կոմունարները, Դերմանիալի տառնյակ հազարավոր գործազուրկները և այլն):

## Հ Ո Գ Ե Ր

Հոգ կոչվում են ըս, ըդ, ը (ձայնավորներից հետո՝ ս, դ, ն) բառերը, վորոնք մենակ չեն գործածվում, այլ զրվում են անփան վրա վերջից և նրա հետ միացած են զրվում. որինակ՝ գիրքը (=իմ գիրքը), գիրքը (=քո գիրքը), գիրքը (=նրա գիրքը, կամ մի ծանոթ, վորոշ գիրք), սովորական՝ զրությամբ՝ գիրքս, գիրքդ, գիրքը կամ գիրքն:

## Գ Ե Ր Ա Ն Ո Ւ Կ

Դերանուն կոչվում են այն բառերը, վորոնք նախադասության մեջ գրվում են գոյական անվան (հատուկ կամ հասարակ) փոխարեն:

Դերանվան մի քանի տեսակներ կան.

ա) Անձնական (յես, դու նա, ինքս, ինքդ, ինքը):

բ) Յուցական (այս, այդ, այն, ոտ, դա, նա):

գ) Ստացական (իմ, քո, իր, մեր, ձեր, իրենց):

դ) Փոխադարձ (իրար, միմյանց):

ե) Հարցական (ավ, ինչ, վար, քանի՞, վո՞թքան, ի՞նչքան, վո՞րպես և այլն):

Դերանուններն իրեն գոյական հոլովվում են հետեւյալ ձևով

## Յեզակի

Աւզգ	յես	դու	նա	ինքը	ով
Սեռ	իմ	քո	նրա	իր	մւմ
Տր	ինձ,	քեդ	նրան	իրեն	մւմ
Հայց	ինձ,	քեդ	նա, նրա	ինքը, իրեն	մւմ, ով
Բաց	ինձնից	քեզնից	նրանից	իրենից	ումնից
Գործ	ինձնով	քեզնով	նրանով	իրենով	ումնով
Ներդ	ինձնում	քեզնում	նրանում	իրենում	ումնում

## Հոգնակի

Ուզգ	մենք	դուք	նրանք	իրենք	ովքը
Սեռ	մեր	ձեր	նրանց	իրենց	—————
Տր	մեդ	ձեդ	նրանց	իրենց	—————
Հայց	մեզ	ձեզ	նրանց	իրենց	—————
Բաց	մեզնից	ձեզնից	նրանցից	իրենցից	—————
Գործ	մեզնով	ձեզնով	նրանցով	իրենցով	—————
Ներդ	մեզնում	ձեզնում	նրանցում	իրենցում	—————

Նա դերանվան պես հոլովվում են՝ սա, սրա, սրան, սրանից և այլն դա, զրա, զրան և այլն:

Այս այդ. այն դերանունները չեն հոլովվում: Դրանք հաճախ գործածվում են ածականաբար, որինակ՝ այս գիրքը, այս գրքի և այլն.

Ածական դերանուն են նաև քանի, վորքան, ինչպիսի և այլն:

## Ա Շ Խ Ա Տ Ա Վ Ն Ք

Արտագրեցեք հետեւյալ հատվածը՝ ընդգծելով ածականները, թվականները և գերանունները.

«Մեր կոլտնտեսության բրիգադներն այս տարի գաշտ դուրս յեկան մեծ յեռանդով: Նրանք ցանքը կատարեցին վեց ուրում, բարձր գորակով, զատած ու աթատահանած սերմով: Արա հե-

տեսանքով այս տարի ավելի շատ բերք ենք սպասում, քան անցյալ տարի: Ցանքից հետո կոլտնտեսության վարչությունը յերբորդ բրիգադին բարձրացրեց կարմիր տախտակին:

### Ա Տ Ո Ւ Գ Ի Զ Ա Ր Ց Ե Բ Բ

- ա) Վճռ բառերն են կոչվում ածական:
- բ) Ածականը յերբ չի հոլովում և յերբ և հոլովում:
- շ) Թվականները քանի տեսակ են լինում:
- դ) Թվականը յերբ չի հոլովում և յերբ և հոլովում:
- ե) Դերանունները յերբ են գործածվում:
- զ) Վորժնք են դերանունների տեսակները:
- է) Վորժնք են հողերը:
- ը) Ի՞նչ նշանակություն ունի և հողը:

### Վ Դ Ա Ս

#### Բ Ա Յ

Բայ կամ դիմավոր բայ կոչվում են այն բառերը, վորոնք ցույց են տալիս գործողություն կամ լինելություն (անել լինել, ե, կա) և գեմք (անձ), վարին վերագրում և գործողությունը:

Դեմքը յերեք տեսակ ե, առաջին գեմք՝ խոսող անձը (յեզակի՝ յես, հոգնակի, մենք), յերկրորդ գեմք՝ խոսակից անձը, վորին դիմում և խոսողը (յեզակի՝ դու, հոգնակի՝ դուք), յերրորդ գեմք՝ մի ուրիշ անձ կամ իր, վոր վոչ խոսողն ե, վոչ խոսակիցը (յեզակի՝ նա, հոգնակի՝ նրանք): Որինակ՝ խոսողը գնալու գործողություն վերագրելով իրեն, ինքն իր համար ասում և գընացի (=յես գնացի, առաջին գեմքի բայ). Խոսակցին վերագրելով գործողությունը՝ ասում և գնացիր (=դու գնացիր, յերկրորդ գեմքի բայ). իսկ մի ուրիշի համար՝ զնաց=(նա գնաց, յերբորդ գեմքի բայ):

Բայը յեզակի թվով ե, յերբ գեմքը մի առարկա յե ցույց տալիս. հոգնակի թվով ե, յերբ գեմքը մեկից ավելի առարկա յե ցույց տալիս. Որինակ՝ զնաց՝ յեզակի յե (նա մենակ գնաց). զնացին՝ հոգնակի յե (նրանք բոլորը գնացին):

### Գ Ե Բ Բ Ա Յ

Բայերի արմատներից կամ բներից, ալ, ել, ած, ում, լիս, թյուն ցույց տվող գոյականներ և ածականներ (ու մակեայներ), վորոնք գեմք չունեն, և կոչվում են գերբայ կամ անգեմ բայ սրբնակ՝ զնաւ, զնացած, զնալու, զնալիս, զնում, զրել, զրած, զրելու, զրելիս, զրում:

### Խ Ո Ն Ա Ր Հ Ո Ւ Մ

Բայի փոփոխությունները, վարսնցով կազմվում են բայի ձևերը, կոչվում են խոնարհում: Ձևերը պարզ են, յերբ մի բայ

են, բաղադրյալ են, յերբ կաղմված են մի գերբայից և եմ կամ  
լինեմ բայերի ձեւերից:  
Բայի ձեւերը ցույց են տալիս՝ գեմք, թիվ, ժամանակ (ներ-  
կա, անցյալ, ապառնի) և յեղանակ (սահմանական, հրամայական,  
ըդական, յենթադրական, հարկադրական):

## ԲԱՅԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՏԿԵՐԸ

(Գլխավոր ձեվերը)

### ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Ներկա

Յեզակի

Գրում եմ

Գրում ես

Գրում ե

Անցյալ անկատար

Գրում եյի

Գրում եյիր

Գրում եր

Ապանեի

Գրելու յեմ

Գրելու յես

Գրելու յե

Ապանեի անցյալ

Գրելու եյի

Գրելու եյիր

Գրելու յեր

Վաղակատար

Գրել եմ

Գրել ես

Գրել ե

Վաղակատար անցյալ

Գրել եյի

Գրել եյիր

Գրել եր

Հոգնակի

Գրում ենք

Գրում եք

Գրում են

Գրում եյինք

Գրում եյիք

Գրում եյն

Գրելու յենք

Գրելու յեք

Գրելու յեն

Գրելու եյինք

Գրելու եյիք

Գրելու եյն

Գրել ենք

Գրել եք

Գրել են

Գրել եյինք

Գրել եյիք

Գրել եյն

Հարակատար

Գրած եմ:

Գրած ես

Գրած ե

Հարակատար անցյալ

Գրած ելի

Գրած ելիր

Գրած ել

Անցյալ կատարյալ

Գրեցի

Գրեցիր

Գրեց

Հրամայական

Գրիր

(Ունի միայն յերկրորդ գեմք)

ԲՂՋԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

Գրեմ

Գրես

Գրի

Ապանեի

Գրած ենք

Գրած եք

Գրած են

Գրեցինք

Գրեցիք

Գրեցին

Գրեցիք

Գրեցիք

Գրեցին

Ապանեի անցյալ

Գրեյի

Գրեյիր

Գրեյր

ՅԵՂԱՆԱԿ

Ապանեի կամ ներկա

Կը գրեմ

Կը գրես

Կը գրի

Կը գրենք

Կը գրեք

Կը գրեն

Անցյալ

Կը գրեյի

Կը գրեյիր

Կը գրեյր

Կը գրեյինք

Կը գրեյիք

Կը գրեյինք\*)

ՅԵՂԱՆԱԿ անցյալը կոչվում է նաև «պայմանական»

\*) Այս ձեւերը սովորական գրությամբ գրվում են առանց ը տառի.



Ապահնի կամ ներկա

Պիտի գըեմ	Պիտի գըենք
Պիտի գըես	Պիտի գըեք
Պիտի գըի	Պիտի գըեն
Անցյալ	
Պիտի գըեյի	Պիտի գըեյինք
Պիտի գըեյիր	Պիտի գըեյիք
Պիտի գըեր	Պիտի գըեյին

### Ա Ն Կ Ա Ն Ո Ն Բ Ա Յ Ե Ր

Կան և անկանոն բայեր, վորոնք խոնարհման այս ընդհաւնուր կանոնին չեն լինթարկվում, այլ շեղվում են դրանից. որինակ՝ զալ բայի ներկա ժամանակը կլինի գալիս եմ և վոչ թե գալում եմ, ինչպես ասում են վորոշ բարբառներում: Լալ—լալիս եմ և վոչ թե լալում եմ, տալ—տալիս եմ և վոչ թե տալում եմ Բայց՝ կարգալ—կարդում եմ, հազար—հազում եմ: Առաջին յերեքն անկանոն բայեր են, վերջին յերկուսը՝ կանոնավոր:

### Ս Ա Կ Բ Ա Յ

Մակրայ կոչվում են այն բառերը, վորոնք խոսքի մեջ վորոշում են բայի ցույց տված զործողության ձեզ, (աստիճն բըի գաղն իր պլանը կատարում են հարգածայնորեն) կամ ածականի ցույց տված վորակի աստիճանը (ավելի մեծ, շատ մեծ):

### ԿԱՊ, ԾԱՂՎԱՊ, ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Կապ (նախադրություն և հետադրություն) կոչվում են այն բառերը, վորոնք նախադասության մի անդամը կապում են իր ըրացման հետ (գնում եմ դեպի տուն):

Ծաղկապ կոչվում են այն բառերը, վորոնք կապում են նախադասությունը նախադասության հետ կամ նախադասության համադաստանամերը միմյանց հետ (պյուղթզեկիցը գնաց դաշտ և ուսումնասիրեց այնտեղ կատարվող աշխատանքը): Մարկառը հայտնեց, վոր իրենց թերթը լույս ե տեսնելու վաղը):

Զայնարկություն կոչվում են այն բառերը, վորոնք արտաշայում են խոսողի զգացմունքը, վերաբերմունքն այս կամ այն լերեսոյթին (մի, ոհ, հեյ, ավագ և այլն):

### Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Խոնարհեցեք վաղել բայը:

### Վ Ի Դ Ա Ս

### ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Նախադասություն կոչվում է մեկ կամ մի քանի բառով արտահայտած միտքը (մտածությունը): Որինակ՝ պատի քերը լույս տեսավ: Խմբկոլը կազմակերպեց քերը բարձրաձայն ընթերցանություն: Նուապեսի: Գործը սպասում է մեզ: Սրանցից յուրաքանչյուրը մի միտք և արտահայտում, ուրեմն և մի նախադասություն է:

### Պ Ա Ր Զ Յ Ե Վ Բ Ա Ր Դ Ն Ա Խ Ա Դ Ա Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ն Ե Ր

Հաճախ մի քանի նախադասություն շաղկապվելով իրար հետ՝ կազմում են մի բարդ նախադասություն, որինակ՝ Արամը զյուղ շտապեց, վորպեսզի խմբկոլի նիստից չուշանա: Սա յերկու պարզ նախադասություններից կազմված մի բարդ նախադասություն է, զորի մեջ յերկու միտք և արտահայտված: 1) Արամը զյուղ շտապեց, 2) խմբկոլի նիստից չուշանա: «Վորպեսզի» բառը շաղկապ է:

### Ա Ս Ա Յ Վ Ա Ծ

Ասացված կոչվում են պարզ և բարդ նախադասությունները, յերբ առանձին վերցրած մի ամբողջացած, լրացած միտք են արտահայտում: Որինակ՝ 1) Բերքահավաքն սկսվել է: 2) Մենք մեր տասնորյա քերը դարձրինք հիմորյա, վորպեսզի ավելի լավ լուսաբնենիք քերքահավաքի խնդիրները: Սրանցից առաջինը պարզ նախադասություն է և միաժամանակ մի ասացված, յերկորդը բարդ նախադասություն է և միաժամանակ մի ասացված: Բայց յերկորդը նախադասության յերկրորդ մասը (վորպեսզի ավելի լավ լուսաբնենիք քերքահավաքի խնդիրները) ասացված չե, քանի վոր առանձին վերցրած լրիվ միտք չի արտահայտում:

Մենք խոսում ենք ասացվածներով: Միմյանց հաջորդող ասացվածներից են կազմվում մեր խոսկածքը, պատմվածքը, հոդ-

վածը, բանաստեղծությունը և այլն: Ամեն ասացվածից հետո  
դրվում ե վերջակետ:

### ՄԻԶԱԴԱՍ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Յերեխն յերկու նախադասություններն իրար հետ շաղկապ-  
վում են վոչ հաջորդաբար, այլ մեկը մյուսի մեջ մտնելով՝  
որինակ՝ Արամը, վոր հեռակայող ե, այսոր պարապմունքի չի յե-  
կիլ: Այստեղ զլիավոր նախադասությունն ե Արամն այսոր պա-  
րապմունքի չի յեկիլ: «Ճեռակայող ե» յերկրողական միջադաս  
նախադասություն ե, վոր մտել ե զլիավոր նախադասության  
մեջ:

### ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

Նախադասության պլիսավոր անդամներն են ստորովյալ և  
յենքակա:

Ստորագյալը ցույց ե տալիս վորեն դործողություն, վիճակ,  
դրություն, հատկություն, վոր վերագրվում ե յենթակային կամ  
ստորոգվում ե յենթակայի վրա:

Յենքական ցույց ե տալիս այն տուարկան, վորին վերագըր-  
վում ե կամ վորի վրա ստորոգվում ե դործողությունը, վի-  
ճակալը հատկությունը:

Բացի յենթակայից ե ստորոգյալից՝ նախադասություն կազ-  
մելու համար հարկավոր և նաև ստորոգում ցույց տվող մի բառ,  
վորով յենթական և ստորոգյալը կապվում են միմյանց հետ: Այդ  
բառն ե եմ, լինել եյտական բայց, վոր կարող ե լինել նախադա-  
սության մեջ կամ չլինել, բայց բայի հետ հասկացվել, յենթագը-  
րել: Որինակ՝ Վարդանը կարդում ե: Այստեղ Վարդանը յենթա-  
կան ե (գործողություն կատարողը), կարդում ե ստորոգյալն ե  
(յենթակայի կատարած դործողությունը ցույց տվող անդամը),  
վորի հետ կա նաև ե եյտական բայց):

«Տունը բարձր ե: Այստեղ տունը յենթական ե, բարձր ածա-  
կանն ստորոգյալն ե (յենթակայի հատկությունը ցույց տվող  
բառը) և ե եյտական բայց: «Վարդանը կարբաց», Վարդանը՝ յեն-  
թակա, կարգաց՝ ստորոգյալ, վորի հետ յենթագրվում ե ե եյտ-  
ական բայց:

Նախադասության մյուս անդամները յենթակայի կամ ստո-  
րոգյալի լրացումներն են, կամ լրացման լրացումները, վորոնք  
միտքն ավելի յեն ընդարձակում ու պարզաբանում, ցույց են  
տալիս տեղը, ժամանակը, ձևը և այլն:

### Զ Ե Ղ Զ Ո Ւ Մ

Պատահում ե, վզը նախադասության մեջ յենթական կամ  
ստորագյալը և մյուս անդամները զեղչվում են, այսինքն բառե-  
րով արտահայտված չեն լինում, այլ հասկացվում են իմաստով:  
Որինակ՝ յես գիրք եմ կարդում, իսկ դու՝ լրագիր: Յերկրորդ նա-  
խադասության մեջ զեղչված ե «ես կարդում», լրիվ կիխներ այս-  
պիս՝ յիս դիրք եմ կարդում, իսկ դու լրագիր ես կարդում:

### ՀԱՄԱՉԱՑՆՈՒԹՅՈՒՆ

Յենթական և բայց իրենց զեմքով ու թվով համաձայն են  
դրվում: Յեթե յենթական յեղակի յե, բայն ել յեղակի թվով և  
դրվում: Յեթե յենթական յերբորդ դեմքի յե, բայն ել յերրորդ  
դեմքով և գրվում:

Որինակ՝ հեճանքը զնաց, արակտորիստը գործը վերջացրեց.  
ուսանողը կարդում ե, ծառը բարձր ե:

Այս նախադասությունների մեջ յեղակի յեն և յենթական  
և բայց:

Հնաձնութեքը զնացին, արակտորիստները գործը վերջացրին,  
ուսանողները կարդում են. ծառին բարձր են:

Այստեղ յենթականները հոգնակի գարձան, հոգնակի գար-  
ձան նաև բայցը:

Բազմակի յենթականների բայց գրվում ե հոգնակի, որինակ՝  
Տիգրանը, Վարդանը, և Սուրենը զնացին:

### ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

Հայերենում բառակասությունը նախադասության մեջ ընդ-  
հանրապես ազտատ ե: Ստորոգյալը գրվում ե սպորաբար յեն-  
թակայից հետո (պարագմանքն սկսվեց): Սակայն վորոշ գեղ-  
քերում, այս կամ այն իմաստը շեշտելու համար, կարող ե յեն-  
թակայի ու ստորոգյալի տեղափոխություն արվել: Նույնպես և  
լրացումների նկատմամբ:

### ՍՏՈՒԴԻՉԻՉ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչ ե նախադասությունը:
2. Ի՞նչպիսի նախադասություններ են լինում:
3. Ի՞նչ ե տացցվածը:
4. Վերոնք են նախադասության զլիավոր անդամները:
5. Կարմաղ ե լինել նախադասություն՝ առանց յենթակայի  
կամ առանց ստորոգյալի:
6. Կարմաղ ե նախադասություն՝ կազմվել առանց եյտական  
բայց կամ «կապի»:

## VII ԴԱՍ ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կետադրության նշանները գրավոր խոսքի մեջ լիստ կարող դեր են կատարում: Առանց այդնշանների հաճախ մտքերն այնպիս կիսառնվեն, վոր վոչ միայն բան չի հասկացվի, այլ նույնիսկ հակառակ իմաստը կատացվի:

Կետադրության նշանները բաժանվում են 3 խմբի:

1. ՏՐՈՀՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ—գերջակետ (՝), միջակետ (՝), ստորակետ (՝) և բութ (՝):

2. ԱՌՈԴՈՆՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ—շեշտ (՝), հարցական նըշան (՝) և բացականչական նշան (՝):

ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՆՇԱՆՆԵՐ—չակերտներ (՝, ո կամ «»), փակագծեր (՝), կախման կետեր (...), բազմակետ (.....), գիծ (—), յենթամնա («), ապաթարց (՝):

Վերջակետը դրվում ե յուրաքանչյուր պարզ և բարդ նախադասության վերջում, յերբ նախադասությունը ամբողջացած, յրացած միտք և հայտնում և մի առանձին ասացված և կաղմում:

Միջակետը դրվում ե ա) բարդ համադաս նախադասության մեջ համադաս նախադասություններից հետո, որինակ՝ բոլոր բրիգադները դաշտ գուրս յեկան, գերանիներն ու մանգաղները պատրաստ եյին, խմբելուն իր թերթը դաշտ փոխադրեց. հնձի յեռուն շրջանն սկսվում եր. Այսիսկ նախադասությունները վերջակետով ել են բաժանվում իրարից:

բ) Ուրիշի ուղղակի խոսքը մեջ բերելիս, այդ խոսքից անմիջապես առաջ. որինակ՝ խմբագիրն ասաց. «Ճղերը, մեր թերթի այս համարն անցյալից ավելի լավ գուրս յեկավ»:

Ստորակետը դրվում ե՝ ա) զիսավոր ու յերկրորդական նախադասությունների միջև (քեզ ասացի, վոր գնաս, թերթը բերես):

բ) Նախադասության բազմակի համադաս անդամների միջև

(Արամը, Սուրենը, Մարկոսը և Խորենը խմբկոլի անդամներ են):  
գ) Միջանկյալ բառերի և միջադաս յերկրորդական նախադասությունների յերկու կողմերում. 1) Մեր թերթը, ինարկե, ամենաաջողն եւ; 2) Մարկոսը, վոր յերեկ մեր տանն եր, արդեն մեկնել և քաղաքք:

«Յեվ» շաղկապից առաջ ստորակետ ե դրվում այն դեպքում, յերբ հաջորդ նախադասության մեջ յենթական փոխվում ե (նախադասը գիտե, վոր յես գնալու յեմ, և ինձ սպասում ե), նաև այն դեպքում, յերբ այդ «Կ»-ը շեշտված ե զործածվում (Յեվ Արամը, և Վահանը, և Մարկոսը ձիշտ ժամանակին յեկան):

Բուրքը դրվում ե ա) բացահայտյալի վրա (հիմա կդա Արամը՝ մեր թերթի խմբագիրը): Բութի փոխարեն այս դեպքում դրվում ե նաև ստորակետ:

բ) Ուրիշի ուղղակի, բայց շատ կարճ խոսքից առաջ (նասաց՝ ուղղում եմ):

գ) Յերբ զեղչվում ե ստորոգյալը (յես խմբագիր եմ, գու՞թղթակից):

դ) Դերբայական լրացումով արտահայտած պարագայի վրա (այդ մասին տեղեկանալով՝ տուն շատպեցի):

Ենջար դրվում ե այն բառի վրա, վոր պիտի արտասանվի շեշտված:

Հարցական նշանը դրվում ե այն բառի վրա, վորով հարցում ե արդիւմ:

Զակերտները գործ են ածվում նուև ծաղրական իմաստով:

Փակագծերի մեջ են առնվում այն միջանկյալ բառերն ու նախադասությունները, վորոնք հիմնական նախադասության հետ միասին հեռավոր կապ ունեն: Կախման կիսեր դրվում են կիսատ արտահայտած նախադասության վերջում:

Գիծը դրվում ե այն ժամանակ, յերբ հաջորդաբար պրում են խոսակիցների անմիջական խոսքերը:  
Որինակ՝

Արամը հարցըեց,

— Այսոր խմբկոլի նիստ լինելու յե.

— Վոչ, հետաձգվել ե, — պատասխանեց Տիգրանը:  
 — Ի՞նչի՞ւ:  
 — Գնալու յենք շրջանային կենտրոն:  
 Դժով նաև անջատվում են նախադասությունները:  
 Դժիկը դրվում ե յերկու բառ իրար միացնելու դեպքում  
 (իրձիթ-ընթերցարան, աման-չաման):  
 Յենքամնան դրվում ե տողադարձի ժամանակ:  
 Սպարացը՝ սղված ձայնավորների ըսի փոխարեն — կա-  
 սեմ, կ'առնի: Բայց տպաթարցը քիչ ե դործածվում, զրում ենք՝  
 կասեմ կառնեմ:

### ԱՇԽԱՏԱՆՔ

Ֆրեցեք մի վոքրիկ հոգված, վորի մեջ դործածեք բոլոր  
 կետադրական նշանները:

## VIII ԴԱՍ

Հեղին կօնսութանոք պետք ե հետեւ հեռակայողների վոճի  
 հստակությանը, պարզությանը, հարատությանը:

Պետք ե հետեւել, վոր կաղմված թղթակցությունների մեջ  
 ավելորդաբանություններ ու կրկնություններ չլինեն: Վոճի հրա-  
 տակությունը խիստ անհրաժեշտ բան ե թերթում աշխատողի  
 համար:

Նյութի բնույթից ել բղխում ե վոճը: Որինակ՝ ագոռտեխ-  
 նիկային վերաբերող հողվածը պիտի գոված լինի ավելի գիտա-  
 կան վոճով, առաջ ավելորդ պաճուճանքների, իսկ դաշտում աշ-  
 խատողների թափն ու խանդավառությունը նկարագրելիս կա-  
 բելի յե գեղարվեստական թեքում տալ գրվածքին:

Գլխավորն այն ե, վոր գողն ամենից առաջ լավ տիրապե-  
 տի իր նյութին, պարզուեն գիտենա, թե ինչ խնդիր ե արձար-  
 ծում, ինչ լուծում ե պահանջում, և կարողանա իր մտքերը վա-  
 րաշ հաջորդականությամբ պարզել:

Պետք ե խուսափել յերկար ու տաղտկալի առաջարաններից:  
 Քիչ չի պատահում, վոր մի փոքրիկ փաստ հաղորդելու համար  
 թղթակիցն սկսում ե դատողություններ անել շատ հեռուներից  
 և իր նախարանն այնքան ե ձգձգում, վոր նրա ծանրության  
 տակ կորչում ե հիմնական խնդիրը, վորի մասին ուզում ե գրել:

Վոճի, գրվածքի պարզության, պատկերավորության, ավե-  
 լորդաբանությունների, բառորի սխալ գործածության և նման  
 ինդիրների մասին խոսելիս առավելապես պետք ե ոգտագործել  
 հեռակայողների գրավոր աշխատանքները:

Մեկի գրածը պետք ե տալ մյուսիս՝ ուղղելու հաջող գր-  
 ված նյութերը պետք ե կարդալ բոլորի առաջ և բացարեկ, թե  
 վորոնք են նրա առավելությունները:

Պետք ե խուսափել գաֆառաբարբառներից, ոտար բառերի ան-  
 տեղի գործածությունից, գոնեկարանությունից և գրաբարաբանու-  
 թյունից: Պատի թերթի լեզուն պետք ե լիովին հասկանալի լինի իր  
 ընթերցողներին:

Այս նպատակին պիտի հետապնդի լեղին կռնսութանոք:  
 Այս նպատակին պիտի հետապնդեն նաև հռակայողները:



Դաշվեռ 6683

պատվ. № 725

Տիրամ 2000

Հայկական ԽՍՀ ժողովագործի Հրատ, ևթ. Հ.Յ.Ի տպարան

ՀՀ Ազգային գրադարան



NL0987279

15 ՀՈՅ 1935

12

ՏՐՎՈՒՄ Ե ԶՐԿ

11

28 684

## АРМЯНСКИЙ ЯЗЫК

Задание 5-ое

Составил А. АРУТЮНЯН

Редактор проф. М. АБЕГЯН

Издательство Совнарк ма Арм. ССР „Хорурաин Айастан“  
Եреван 1938 г.